

---

---

## ԳՈՒՆԱՆՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐՈՒՄ

Ն. Հ. ԴԻԼԲԱՐՅԱՆ

Աշխարհագրական անունների ամբողջությունը յուրաքանչյուր տարածքում, պետության մեջ թե մարզում, այսինքն՝ վարչատարածքային միավորման մեջ կամ ազգային-էթնիկական տարածքում ստեղծում է որոշակի համակարգ, որը կոչվում է տեղանվանական համակարգ: Տեղանվանական համակարգ ասելով պետք է հասկանալ յուրահատուկ բնութագծերի կամ որակների ամբողջությունը, որոնք օրինաչափորեն կրկնվում են աշխարհագրական անունների կազմավորման ընթացքում թե՛ տարժամանակյա, թե՛ համաժամանակյա կտրվածքներով: Այդ բնութագծերն էլ պայմանավորում են արդեն ստեղծված անվանումների կայունությունը<sup>1</sup>: Պարզ է, որ տեղանունները համակարգաստեղծ են այն չափով, ինչքանով տվյալ լեզվի բառապաշարն ու բառակազմական հնարավորություններն են մշակված ու կայուն, քանի որ տեղանունները ընդհանուր բառապաշարի շերտերից մեկն են կազմում: Յուրաքանչյուր տեղանվանահամակարգ հստակորեն տարածական սահմանափակում ունի, ուստի և գիտականորեն կարելի է դատողություններ կատարել որոշակի մարզի կամ տարածքի տեղանվանահամակարգի մասին: Շատ ավելի դժվար է խոսել մի ողջ պետության կամ երկրի տեղանվանահամակարգի մասին, թեև այստեղ ևս հնարավոր է արձանագրել որոշակի ընդհանրություններ:

Տեղանվանագետներից ոմանց համոզմամբ տեղանվանահամակարգերը էապես որոշվում են նախ տարածքային և հետո միայն լեզվական ընդհանրության մեջ, որովհետև բազմազգ տարածքների տեղանունները, չնայած լեզվական տարբերություններին, ի հայտ են բերում ներքին համակարգայնություն<sup>2</sup>: Հայաստանի պարագայում ևս այս տարածքային պայմանավորվածությունը ուրվագծվում է, որովհետև շատ մարզերում առկա տեղանունները, որոնք ունեն հայերեն և թուրքերեն, այսօր արդեն՝ հին և նոր տարբերակներ, իրենց իմաստային դաշտերով և անգամ տեղանվանահիմքերով զգալի ընդհանրություններ են պարունակում, որոշ դեպքերում՝ նույնական կամ համահունչ կադապարներ: Թեև երբեմն լեզվական ընդհանրություն ունեցող տարածքներում չկա միասնական տեղանվանահամակարգ, այսինքն՝ միալեզվությունը բնավ ուղղակիորեն չի ենթադրում միասնական տեղանվանահամակարգի առկայություն տվյալ տարածքում:

---

<sup>1</sup> Տե՛ս **Ա. Բ. Суперанская**, Типы и структура географических названий / Лингвистическая терминология и прикладная топонимика, М., 1964, էջ 59:

<sup>2</sup> Տե՛ս **Յ. Մ. Мурзаев**, Топонимика и география, «Вестник МГУ», 1963, № 3, էջ 14-15:

Տեղանունների համակարգայնությունը երևան է գալիս նախ բառապաշարի մակարդակում, իսկ ապա բառակազմության և ձևաբանության: Այսինքն՝ հստակ տարանջատվում են նույնական միավորների անվանման դեպքում օգտագործվող բառային միջոցները, լինեն դրանք գոյական թե անվանական. օրինակ, տվյալ տարածքում գյուղանունները բաղադրվում են *շեն, ավան և կարմիր, սև, հին, նոր* արմատներով, լճերի անվանումներում համատարած առկա են *ջուր, ակն, կապույտ* բառերը և այլն: Ջուգահեռաբար տվյալ տարածքում գերակշռում են որոշակի բառակազմական միջոցներով և կաղապարներով կազմված տեղանունները, որոնք ունեն ընդհանուր ձևաբանական հատկանիշներ՝ դերբայական կառուցվածք, գոյականի հոգնակի ուղղականի ձև և այլն: Օրինակ՝ Վայոց ձորի տարածքում նկատելի է հարակատար դերբայով մանրատեղանունների բազմաքանակություն, ընդ որում՝ դերբայը կարող է հանդես գալ թե՛ անկախ՝ կողմնակի անդամ խնդրով կամ առանց դրա, թե՛ որոշիչ-որոշյալ կառույցներում, երբեմն նաև գոյականական կիրառությամբ հոգնակերտներով՝ *Կտրած, Ճաքած, Նեխած, Վարած, Կարկուտ թափած, Կայծակ տված, Օձի կծած, Լքված տնակ, Այրած գլուխ, Նահապետի վարած, Նեխած աղբյուր, Սելը տարած, Պլայլածներ, Կրակվածներ* և այլն: Գեղարքունիքի և Արագածոտնի մարզերում հաճախադեպ են գործիական հոլովով ջրանունները՝ *Խաչքարերով, Կաթնով, Քարով, Բարով, Արջով, Փշով, Սալով, Ակներով*....

Այսպիսով, յուրաքանչյուր տեղանվանահամակարգի բնորոշ է որոշակի լեզվական կաղապար, որի ուսումնասիրությունը և վերհանումը էապես կօգնեն հին տեղանունների ստուգաբանության կատարմանը, բնիկ կամ նախնական ձևերի վերականգնմանը, նոր և հին տեղանունների միջև ժառանգորդական կապի ապահովմանը: Տեղանունների կառուցվածքային տիպերի ուսումնասիրությունը հետաքրքրություն է ներկայացնում ոչ միայն զուտ տեղանվանագիտության համար, այլև ընդհանրապես լեզվաբանության, որովհետև յուրաքանչյուր աշխարհագրական անվանում կազմվում է այն լեզվի օրենքներով, որին պատկանում է: Եթե տեղանունը միաժամանակ պատկանում է մի քանի լեզուների, ապա ակնհայտ է, որ այն կրում է այդ լեզուների ազդեցությունը, ուստի կարող է բացահայտել լեզուների փոխազդեցության կամ փոխներթափանցման աստիճանը՝ անկախ նրանց ցեղակից կամ ոչ ցեղակից լինելու հանգամանքից: Այս տեսանկյունից մեծ հետաքրքրություն են ներկայացնում հայ- իրանական, հայ- թուրքական, իսկ ավելի վաղ շրջանում՝ հայ-հայաստական, հայ- սեմական տեղանունները: Վերջին հանգամանքները կարևորվում են ոչ միայն լեզվաբանական հետազոտությունների տեսանկյունից, այլև պատմական գիտությունների առումով. պարզաբանում են տեղանվանակիր ժողովուրդների ծագումը, տեղաշարժերը, ազգագրական նկարագիրը և այլն: Գ.ր. Ղափանցյանը, որը հայտնի է նաև իր տեղանվանագիտական աշխատություններով, պնդում էր, թե հայերը դեպի արևելք իրենց տեղաշարժի ընթացքում բազմաթիվ անվանումներ են բերել Փոքր Ասիայից Արաքսի հովիտ՝ Անի, Ագա, Արդվին, Արավիս և այլն<sup>3</sup>: Տեղանունների նման շարժերն այս կամ այն չափով շարունակվում են

<sup>3</sup> Տե՛ս **Գր. Капанцян**, Историко-лингвистическое значение топонимики Древней Армении, Ер., 1940, *նույնի*՝ Суффиксы и суффиклируемые элементы в топонимике древней Малой Азии, Ер., 1948:

նաև ցայսօր բոլոր ժողովուրդների մեջ, լեզվական տարբեր համակարգերում: Տեղանվանագիտությունն առհասարակ հարուստ նյութ է ընձեռում լեզուների պատմության, ենթաշերտերի բացահայտման, ինչպես նաև պատմական բառագիտության, իմաստաբանության և բառակազմության պատմության վերաբերյալ:

Եթե տեղանվանահամակարգերի քննությունը պետք է լինի տարածքային, այսինքն՝ բացահայտի դրանց արեալը և գործի զուտ այդ արեալի շրջանակներում, ապա տեղանվանական կառույցների վերլուծությունը չպետք է սահմանափակվի առանձին տարածքներով, այլ պետք է ելնի լեզվական սկզբունքից: Կարող ենք նշել, որ տեղանվանական համակարգը զուտ տարածքային է, իսկ տեղանվանական կառույցը՝ վերտարածքային<sup>4</sup>:

Այս հոդվածի նպատակն է քննել գունանունների կիրառությունը Հայաստանի Հանրապետության տարածքում՝ ելնելով և՛ առանձին մարզերում դրանց տարածվածության աստիճանից, և՛ իմաստաոճական յուրահատկություններից, որոնց ընդհանուր քննությունը թույլ կտա բացահայտելու մեր լեզվում գունանունների տեղանվանացման գործընթացը, գունանուն տեղանվանահիմք ունեցող անվանումների կենսունակության և գործածականության արտադրողականության աստիճանը:

Գունանունը մեծ կարևորություն ունի շրջակա աշխարհի ճանաչման ընթացքում, որովհետև իրականությունը մարդն ըմբռնում է գույների միջոցով. ընդ որում՝ գույնը երբեմն ուղղակիորեն բնորոշում է իրերի և երևույթների հիմնական տարբերակիչ որակը, հետևաբար տվյալ տեղանքի միավորները, բնակավայրերը ճանաչող մարդու մեջ ձգտում է առաջանում դրանք անվանել նրանց բնորոշ գույների օգնությամբ:

Գունանունը տեղեկատվական առումով հարուստ հասկացական և բառային միավոր է, որը դյուրությամբ է դառնում նշան, տվյալ դեպքում՝ տեղանուն: Ազգային-պետական լեզվով խոսող հանրության համար մայրենի գունանուններից բաղադրված տեղանունները խորքային տեղեկություններ են պարունակում անվանվող օբյեկտի և նրա հետ մարդկանց հաստատած հարաբերությունների մասին: Եթե տեղանունը օտարալեզու է, և նրա հիմքում ընկած գունանունն անհասկանալի է լեզվակիր հասարակության համար, ապա տեղանունը զրկվում է տեղեկատվական արժեքից: Հատկանշական է, որ ՀՀ տեղանունների հայկականացման գործընթացում հատկապես թուրքական գունանուններից բաղադրված տեղանունները փոխարինվեցին իրենց հայկական համարժեքներով:

Տեղանվան հիմք դառնալով՝ գունանունը նկատելիորեն ընդլայնում է իր իմաստային դաշտը, ընդ որում՝ և՛ ուղղակի, և՛ փոխաբերական իմաստները: Այսպես՝ *Սպիտակ* տեղանվանահիմքը իր բուն գունային բովանդակության հետ մեկտեղ ձեռք է բերում կրաքարով, պեռլիտով և նման հանքաքարերով հարուստ տարածք մատնանշելու իմաստ, *Կարմիրը*՝ երկաթի պարունակության ցուցիչ է, ինչպես նաև հրաբխային ապարներով՝ պեմզայով, կարմիր տուֆով հարուստ լինելու հայտնի նշանակություն ունի, սրանց գունավորում են տվյալ գույների փոխաբերական, այլաբանական իմաստները.

---

<sup>4</sup> Տե՛ս **В. А. Никонов**, Введение в топонимику, М., 1965, էջ 107-112, **Э. М. Мурзаев**, Очерки топонимики, М., 1974, էջ 136-139:

սպիտակը մաքրության, անաղարտության, իսկ կարմիրը արյունահեղության, հեղափոխության խորհրդանիշներ են:

Տեսականորեն տեղանվանահիմք դառնում են գրեթե բոլոր հիմնային գույները՝ *սպիտակ, կարմիր, կապույտ, կանաչ, դեղին, սև* և այլն: Գունանունների անվանողական արժեքը ձևավորվել է վաղնջական ժամանակներում և հազարամյակների ընթացքում ձեռք է բերել գաղափարական, փիլիսոփայական մեծ բեռնվածություն, որը տարբերակված է քաղաքակրթական առումով: Այսպես՝ հին չինական տիեզերաբանների կողմնորոշիչ գույները ներթափանցել են Մերձավոր Արևելք, ապա արևմուտք՝ Եվրոպա: Անգամ ներկա դարաշրջանում թուրքերն իրենց նորակազմ տեղանուններում արևելքը նշանակում են կապույտով կամ երկնագույնով, հարավը՝ կարմիրով, արևմուտքը՝ սպիտակով, իսկ հյուսիսը՝ սևով:

Հիմնային գույները տարբեր քաղաքակրթություններում ստացել են գաղափարաքաղաքական երբեմն փոխաբացառող իմաստներ. այսպես՝ սպիտակը եվրոպական քաղաքակրթության տեսանկյունից ուրախության և մաքրության խորհրդանիշ է, իսկ Հեռավոր Արևելքում և Հնդկաստանում՝ ողբի և տխրության: Եթե սպիտակ և սև գույները տարարժեք են, ապա դեղինի և կարմիրի ու նրանց երանգների ընկալումներն առավել ընդհանրական ու կայուն են. դեղինը և դեղձանը արքայականության, իշխանության նշան են, կարմիրն ու նարնջագույնը՝ ցնցումների, հեղաբեկումների, կապույտը՝ երկնայինի ու սրբազործման:

Լեզվաբանության մեջ տարածված է գունանունների, այսպես կոչված, ունիվերսալության գաղափարը, ըստ որի՝ հիմնային են համարվում հետևյալ 11 գունանունները՝ *սպիտակ, սև, կարմիր, կանաչ, դեղին, կապույտ, բոսորագույն, շագանակագույն, վարդագույն, նարնջագույն և գորշ*: Միաժամանակ նշվում է, որ այս 11 գունանունները տարբեր լեզուներում կարող են նվազել, այսինքն՝ առանձնացվում է առավելագույն գունաքանակը, որը, կախված լեզվակիր հանրության աշխարհընկալումից, քաղաքակրթական ուղղվածությունից և զուտ լեզվական-բառային հնարավորություններից, կարող է պակասել: Ընդ որում՝ հիմնային գունանունները լեզվի մեջ ուղիղ համեմատական կապի մեջ չեն լուսային սպեկտրի ավանդական յոթնյակի հետ՝ կարմիր, նարնջագույն, դեղին, կանաչ, երկնագույն, կապույտ, մանուշակագույն: Գունանունների իմաստային համակարգում առանձնացվում են միջուկը և ծայրամասերը: Միջուկը կազմում են իմաստային տեսանկյունից անկախ, ինքնակա ածական գունանունները, իսկ ծայրամասում դրանց ստորադասվող, այսինքն՝ լրացնող գունանուններն են: Միջուկը կազմող ածականների մեջ գույնի գաղափարն առաջնային է և չի արտահայտվում այլ գունային ածականների միջոցով, միջուկային գունանունները գործածության բարձր հաճախականություն ունեն, բառակազմական ճկունություն, օրինակ՝ կարմիր- կարմրություն, կարմարավուն, կարմրավոր, կարմրել, կարմրիկ, իսկ բառաբարդման հնարավորություններն ավելի մեծ են: Բերենք տեղանվանացած միայն այս գունանունով բարդությունների օրինակներ. *Կարմրաշեն, Կարմրաթառ, Կարմրագյուղ, Կարմրամորուս, Կարմրաջուր, Կարմրալանջ, Կարմրահող, Կարմրաթև, Կարմրաղբյուր* և այլն:

Ծայրամասային գունանունների իմաստը բացատրվում է միջուկային

անդամների միջոցով, այսպես՝ կարմրադեղին, սևագորշ, կապտականաչ, գորշաճերմակ և այլն: Ծայրամասային գունանունները, որպես կանոն, տեղանվան հիմնաբառ չեն դառնում, որովհետև որակյալ նշաններ չեն, նրանք հատակ չեն բնորոշում անվանվող օբյեկտը, բացի այդ՝ մարդկանց մեծամասնությունը լավ չի տարբերակում գունային նրբերանգները, միայն գեղարվեստական մտածողություն և երևակայություն ունեցող անհատներն են տարանջատում կարմիրի շուրջ մեկ տասնյակի հասնող երանգները կամ ցանկացած այլ գույնի աստիճանները:

Որոշ լեզվաբաններ տարբերակում են նաև միջանկյալ գունանուններ, որոնք ձգտում են դեպի միջուկը կամ, հակառակը, դուրս են մղվում այնտեղից՝ համալրելով ծայրամասային գունանունները: Այս տեղաշարժ-տեղափոխություններն ունեն ինչպես զուտ լեզվական, այնպես էլ արտալեզվական պատճառներ: Հայերենի միջանկյալ գունանունների շարքին կարող են դասվել *ծիրանին, գորշը*: Հայերենի համար որպես գունային հարաբերականորեն կայուն միջուկ առանձնացվում են 6 գունանիշ ածականներ՝ *սև, սպիտակ, կարմիր, կանաչ, կապույտ, դեղին*<sup>5</sup>: Լեզվի զարգացման տարբեր շրջաններում գունանունների կազմը կարող է փոփոխվել, դրանք պետք է դիտարկել համաժամանակյա կտրվածքով:

Գունանուն պարունակող հայկական տեղանունները հնագույն ծագում ունեն, և հետաքրքիր է, որ վճռական դերակատարում ունեն բանահյուսական երկերում, վկայված են հեքիաթներում: «Սասնա ծռեր» դյուցազներգության գրեթե բոլոր պատումներում որպես վիպական գործողությունների հանգուցակետ հանդես է գալիս *Կապուտկող* տեղանունը, այսպես՝ Սանասարն ու Բաղդասարը *Կապուտկողի* թագավորի մոտ են ծառայության անցնում. *Կապուտկողը* Վանա լճի հարավային հատվածում գտնվող լեռան և հարակից տարածքների անվանումն է, մի քանի այլ պատումներում *Կապուտկողին* փոխարինում է *Բերդ Կապուտինը*<sup>6</sup>՝ Հին կապույտը, Արտագերս բերդը, ըստ որոշ պատումների՝ Խանդութ Խաթունն այստեղ է ծնվել<sup>6</sup>: «Սասնա ծռերում» հիշատակվում է նաև *Սև ջուր* տեղանունը, որը առասպելական գետ է. եթե այն գետինը ճեղքի և երկրի երես դուրս գա, ապա կհեղեղի ողջ աշխարհը: Այսինքն՝ սև գունանունն այս պարագայում խորհրդանիշն է աղետի, համընդհանուր չարիքի: Դյուցազներգության մեջ նշվում է, որ երբ Թուր Կեծակին երկու կես արեց Մըսրա Մելիքին, այն խրվեց հողի մեջ ու հասավ Սև ջրին, և եթե հրեշտակն իր թևերով չժածկեր ճեղքված հողը, Սև ջուրը կհեղեղեր ամբողջ աշխարհը<sup>7</sup>: Բոլոր պատումներում նշված է Տարոնի կամ Մուշի գավառում գտնվող *Սևսարը* (Տավրոսը), որը բարձրակարգ որսատեղի համբավ ուներ:

Այս հողվածում քննության ենք առել Հայաստանի Հանրապետության 8 մարզերի տեղանուններում գունանիշ ածականներից կազմված անվանումները. որպես աղբյուր ծառայել են ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ

<sup>5</sup> Տե՛ս **Ս. Գրիգորյան**, Հայերենի գունանունները և նրանց լեզվաոճական արժեքը, Եր., 1998, էջ 66-70:

<sup>6</sup> Տե՛ս «Սասնա ծռեր. Հայ ժողովրդական վեպ. Ընտիր պատումներ», Եր., 2008, էջ 538:

<sup>7</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 560:

գույքի կադաստրի պետական կոմիտեի հրատարակած աշխարհագրական անվանումների պաշտոնական տեղեկատուները: Ընդհանուր թվով գունանուններից կազմվել է 500 տեղանուն:

Մեր ուսումնասիրած տարածքում առանձնանում են հետևյալ գունանուն-տեղանվանահիմքերը՝ *կարմիր, ալ, սև, սպիտակ, ճերմակ, կապույտ, լաջվարդ, գորշ, շեկ, կանաչ, դեղին, ոսկի* (վերջինս տեղանուններում դիտարկել ենք իբրև գունանուն միայն այն դեպքերում, երբ ակնհայտ է նրա գունային և ոչ մետաղի իմաստը, օրինակ՝ *Ոսկեհող, Ոսկեհանդ, Ոսկեմարգ, Ոսկեդաշտ, Ոսկեվարս, Ոսկեմատ* և այլն): Հստակ գունային իմաստ են արտահայտում *մուգ* և *թուխ* բառերը, որոնք, սակայն, հազվադեպ են հանդիպում. *թուխ-ը, որպես կանոն, հանդիպում է Մանուկ անձնանվան հետ և ունի ընդգծված կրոնական բովանդակություն*. Հայաստանում պաշտված քրիստոնյա նահատակի մականունն է. բոլոր մարզերում ունենք բազմաթիվ մատուռներ, սրբավայրեր, ուխտատեղիներ և դրանց հարող աղբյուրներ, դաշտեր, ձորեր և բլուրներ, որոնց անվանումների առաջին բաղադրիչն է: *Թուխ Մանուկ* անվանումներում առաջնայինը սրբի անձնանունն է, իսկ գունանունը միջնորդաբար է դարձել տեղանվան բաղադրիչ, որպես մականվան մաս: Սակայն կան *թուխ* արմատով եզակի կազմություններ, որտեղ այն առաջնային գունային իմաստ ունի՝ *Թուխ աղբյուր, Թուխքար: Մուգ* արմատով հանդիպել է *Մուգքար* ձևը միայն՝ որպես հանդանուն: Իբրև գունանուններին հարող ինքնուրույն խումբ առանձնացնենք նաև *Գունեղ* դաշտանունը (Վայոց ձոր) և *Երփնածոր* գետանունը (Գեղարքունիք): Ստորև բերենք մեր քննած ՀՀ 8 մարզերում գունանունների տեղանվանակերտման արտադրողականությունն արտացոլող վիճակագրական հետևյալ աղյուսակը:

Գունանուններ	Մարզերի անվանումներ							
	Արարատ	Արագածոտն	Արմավիր	Գեղարքունիք	Կոտայք	Շիրակ	Վայոց ձոր	Տավուշ
կարմիր	8	40	18	22	14	41	14	20
ալ	-	1	-	-	-	1	2	-
կապույտ	2	6	2	8	9	5	6	8
լաջվարդ	-	-	1	-	-	-	-	-
սև	5	25	8	20	22	15	13	21
սպիտակ	6	14	2	6	2	2	7	8
ճերմակ	-	3	-	6	3	2	3	1
կանաչ	-	1	-	1	3	-	-	1
դեղին	-	-	-	-	-	-	2	-
գորշ	1	7	-	2	6	2	3	-
ծիրանի	-	-	-	-	1	1	-	-
ոսկի	1	2	2	-	3	2		1
շեկ	-	3	-	5	2	3	2	9

Ինչպես երևում է աղյուսակից, բուն կամ մեր լեզվի համար հիմնային գունանուններից տեղանվանակերտ ամենամեծ ներուժն ունի *կարմիր* անվանը իր հոմանիշ *ալ ձևով՝ 177* կարմիր, 4 ալ: Վիճակագրական աղյուսակն ակնհայտորեն ցույց է տալիս այս գույնի հանդեպ հայ անվանադիրների հակումը, որն ունի և՛ ուղղակի, և՛ փոխաբերական իմաստային երանգավորում. կարմիր գույնը բնորոշ է հայաստանյան բնությանը, արևից այրված հողին ու ժայռերին, մեր ընդերքում առկա հրաբխային ապարներից, մեր պատմական ճակատագրին ու երագանքներին: Կարմիր բառը բոլոր ժամանակներում իմաստային մեծ ընդգրկում ունեցող գունանուն է ոչ միայն հայերենում, ուստի և այն ամենատարածված գունանուն տեղանվանահիմքերից է թե՛ հնդեվրոպական լեզուներում, թե՛ թուրք-թաթարական, թե՛ սեմական: Թուրքերենում կարմիր բառն ունի ոսկի իմաստը ևս՝ *կզի*, որը հայտնի տեղանվանակազմիչ է: Բացատրական բառարաններում կարմիր անվան իմաստների շարքում նշվում են՝ «զեղեցիկ, հաճելի, պայծառ, երջանիկ, բախտավոր, բարեբաստիկ, թանկագին» բացատրությունները, որոնք առավել հասկանալի են դարձնում այս բառի և նրա միջոցով անվանված աշխարհագրական միավորների կամ բնակավայրերի հանդեպ վերաբերմունքը:

Կարմիրը հայերենի տեղանուններում հանդիպում է ինչպես մաքուր ձևով՝ *Կարմիր՝* որպես լեռների, աղբյուրների, լճերի, գետերի և բնակավայրերի անուն, այնպես էլ զանազան ձևափոխումով, որոնցից ամենատարածվածը գրաբարյան *ք* հոգնակերտն է՝ *Կարմիրք*, ապա՝ *ավոր* անանցը՝ *Կարմրավոր*. վերջինս հիմնականում եկեղեցիների, վանքերի և սրբատեղիների անվանում է դառնում, ինչպես նաև՝ դրանց հարող դաշտերի, բլուրների և գետակների: Կարմիր գունանունը առավել հաճախ ստեղծում է բարդ և բաղադրյալ տեղանուններ: Բարդությունները կարող են կազմվել և՛ հողակապով, և՛ առանց դրա. հանդիպում են ինչպես *Կարմրասար*, այնպես էլ *Կարմիրսար*, *Կարմրաքար* - *Կարմիրքար* տիպի կազմություններ: Որոշիչ-որոշյալ կապակցություններն արդեն հստակ միտում ունեն կցական բարդությունների վերածվելու, դրանք տեղեկագրերում բերված են հիմնականում միացյալ գրությամբ, թեև ակնհայտ է, որ ուղղագրական միասնականություն նման կառույցներում դեռևս չկա:

Գունանունների հետ որպես տեղանվանահիմք հայերենում գործածվում են տեղանքի միավոր կամ բնակավայր նշանակող հետևյալ բաղադրիչները՝ *սար*, *քար*, *հող*, *ջուր*, *աղբյուր*, *դաշտ*, *հանդ*, *գագաթ*, *կատար*, *ավան*, *շեն*, *գյուղ*, *բերդ*... Կարմիր արմատով կազմված մեծաթիվ տեղանունները հաստատում են այս օրինաչափությունը՝ *Կարմրասար*, *Կարմրաջուր*, *Կարմրաքար*, *Հին Կարմրավան*, *Նոր Կարմրավան*, *Կարմրաբերդ* և այլն: Չուտ կարմիրին վերաբերող կապակցություններից մեջբերենք նաև փոխաբերությամբ ստեղծված տեղանունները, որտեղ գույնը նախ վերաբերում է որևէ երևույթի կամ առարկայի, հետո միայն հարաբերվում տվյալ տարածքի միավորին: Նման տեղանունները կա՛մ բարդ են, կա՛մ բաղադրյալ՝ *Կարմրամորուս*, *Կարմիր մատի*, *Կարմիր որդանի*: Բաղադրյալ տեղանունները, ինչպես նշեցինք, որոշիչ-որոշյալ կապակցություններ են՝ անվանվող օբյեկտի որակի մատնանշմամբ, ընդ որում՝ հայոց տեղանունները հիմնականում երկբաղադրիչ են, թեև հնարավոր են նաև եռաբաղադրիչ կա-

նույցներ՝ *Կարմիր դար, Կարմիր արև, Ռուսական Կարմիր ամրոց, Ռուսական Սև ամրոց, Վերին Կարմիր սուր, Վերին Կարմիր աղբյուր, Ներքին Կարմիր աղբյուր, Սև-սև քարերի բլուր*: Որոշ դեպքերում առկա է գունանվան միջնորդավորված տեղանվանացում. լեռը նման է մորուքի, իսկ այդ մորուքն էլ գուգորդվում է կարմիր գույնի հետ, բլուրը հիշեցնում է մարդկային ձեռքի մատները, որոնք կարմիր են, որովհետև հողն այնտեղ կարմիր է, գերակշռում են հրաբխային ապարները: Բերենք կարմիր գունանունով և տարբեր հիմնաբառերով կազմված տեղանունների բնութագրական օրինակներ՝ *Կարմրավան, Կարմրաշեն, Կարմրավանք, Կարմրաքար, Կարմիրկող, Կարմիր ժամ, Կարմիր Ավետարան, Կարմիր դար, Կարմիր փայտ, Կարմիր արև, Կարմիր Արեգունի* և այլն: Կարմիրի հոմանիշներից տեղանուններում որպես հիմնաբառ հանդիպում է ալ-ը, սակայն մեր քննած տարածքներում առկա է ընդամենը 4 նման տեղանուն՝ 1-ը Արագածոտնում, որ պարզ արմատական հանդանուն է՝ *Ալ, 2-ը՝ Վայոց ձորում՝ ջրանուններ են՝ Ալակն, Ալ լիճ, և Շիրակում 1 գյուղանուն՝ Ալվար*:

Կարմիրից հետո երկրորդ տեղում տեղանվանաստեղծման ունակությամբ *սև* գույնն է՝ 129 տեղանուն: Այս երկու գույները, հակառակ իմաստներ արտահայտելով հանդերձ, իրար մոտ են, նման, որովհետև երկուսն էլ ունեն բնութագրական մեծ կարողություն, շրջապատից հստակ տարանջատվելու հնարավորություն, հեշտ են հիշվում, ինչը նշանների համար ամենակարևոր հատկանիշներից է, իսկ քանի որ տեղանունը յուրօրինակ նշան է, ուստի և նման բաղադրիչով կամ արմատով տեղանունները տարածված են ողջ աշխարհում: Բացի ուղիղ գունային իմաստից՝ «ածխի, մրի գույն, չափազանց մուգ գույն, թուխ, գորշ»<sup>8</sup>, սև ածականն ունի 10-ից ավելի փոխաբերական իմաստներ, որոնցից գերակա է խավարի, չարիքի և աղետի գաղափարը: Այսպիսով, այն խորհրդանշում է կարմիրի ուղղակի հակադրությունը, թեև սևի հականիշն ավանդաբար համարվում է սպիտակը, սակայն գաղափարաբանորեն նրա բուն հակադրությունը կարմիրն է, կարմիրն ու սևը լույսի և խավարի, կյանքի և մահվան բնութագրիչներն են: Այս հակադրությունն իր գեղարվեստական մարմնավորումն ունի և՛ համաշխարհային գրականության, և՛ նկարչության մեջ: Լեզվական փաստերի ուսումնասիրությունը վկայում է, որ սևի ու կարմիրի փոխկապակցվածությունն արտահայտված է նաև բառապաշարում, մասնավորապես՝ տեղանուններում: Ընդ որում, կախված անվանադիր ազգի հոգեկերտվածքից և աշխարհընկալումից, դրանց մրցակցության մեջ մե՛րթ հաղթում է կարմիրը, այսինքն՝ այն առավել հաճախադեպ և արտադրողական է, մե՛րթ՝ սևը:

Յուրաքանչյուր ազգի ու մարդկային հանրության կյանքում սև և կարմիր շրջափուլերը պարբերաբար հաջորդում են միմյանց: Տեղանունների առաջացման գործընթացում պետք է հաշվի առնել նաև գունանունների ուղիղ իմաստով կիրառության պատճառները. շրջապատող բնությունը թելադրում է իր օբյեկտիվ ներկայանակը. միջերկրածովյան, կովկասյան տեղանուններում մեծ տեսակարար կշիռ ունեն կապույտը և կանաչը, ասիական ժողովուրդների շրջանում տարածված են դեղին գունանունից կազմված աշխարհագրական անունները:

<sup>8</sup> **Էդ. Աղայան**, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր. 1976, էջ 1293:

*Սև-ը*, ի տարբերություն կարմիրի, կապույտի և սպիտակի, ինքնուրույն շատ սակավ է դառնում տեղանուն. հանդիպել ենք միայն *Սև* անվամբ մի լճի Արարատի մարզում: Իսկ բառաբարդման ժամանակ կամ բառակապակցության մեջ սև գույնը շատ գործուն տեղանվանահիմք է, ածանցներից սևի հետ կիրառվել են միայն **ուկ-ը** և **ուտ-ը**՝ *Սևուկ բերդակ, Սևուտ*:

Բերենք սև տեղանվանահիմքով բարդ և բաղադրյալ կազմությունների օրինակներ, որտեղ գունանունը որոշիչ է դառնում տարբեր բառերի համար՝ ռելիեֆի անվանումներից մինչև մարմնամասեր, կենդանանուններ, կենցաղի առարկաներ՝ *Սևահող, Սևահողեր, Սևասար, Սևաբերդ, Սևաձոր, Սևատափ, Սևատեղ, Սևաջուր, Սևախայտ, Սևծմակ, Սև բլուր, Սև քարի տակ, Սևակնի գլուխ, Սև խոյ, Սև քիթ, Սև սիրտ, Սև ագարակ, Սև կատար, Սև խարան, Սև-սև քարերի բլուր, Սև-սև քարերի թախտ* և այլն:

Երրորդ տեղում *սպիտակ* գույնն է, որը հանդիպում է նաև *ճերմակ* արմատով (45 սպիտակ, 16 ճերմակ): Նշենք, որ ռուսական տեղանուններում գունանուններից սպիտակն ամենատարածված տեղանվանահիմքն է: Այս գունանվան դեպքում ևս տեղանվանացման եղանակները նույնն են. գունանունն առանց ածանցի դառնում է հատուկ անուն՝ *Սպիտակ, Ճերմակ* (այս անուններով հայտնի են լեռ, գետ, աղբյուր, ժայռ, բնակավայր, քաղաք, ամրոց, վանք), ապա կազմում զանազան բարդություններ կամ դառնում բառակապակցության անդամ՝ իբրև որոշիչ՝ *Ճերմակ դաշտ, Ճերմակ հողեր, Ճերմակավան, Սպիտակ հողեր, Սպիտակ քար, Սպիտակ ջուր, Սպիտակաքար, Սպիտակասար* և այլն: Ածանցավոր միակ կազմությունը *Սպիտակավորն* է:

Սպիտակին հաջորդում է *կապույտը*՝ 46 տեղանուն: Այս գունանունը իր ուղիղ իմաստով շատ հաճախ դառնում է ջրային օբյեկտների անվանում: Հայաստանի գրեթե բոլոր մարզերում կան մի շարք *Կապույտ լճեր, աղբյուրներ*: Իբրև երկնքի հիմնական գույն այն դարձել է նաև լեռների և սարերի անվանում, որոնցից էլ փոխանցվել է նրանց ստորոտներում կառուցված գյուղերին, բերդերին ու ամրոցներին, վանքերին: Հանդիպել ենք *Կապույտ քար, Կապույտ սար* լեռնանունների, ինչպես և *Կապույտ կոչվող գյուղերի, ամրոցների, բերդերի*: *Կապույտ* գունանունը մեր ուսումնասիրած մարզերում հանդիպում է միայն *-ան* և *-ակ* ածանցների հետ՝ *Կապուտան, Կապուտակ* ձևերով: Բարդության բաղադրիչ սակավ է դառնում՝ *Կապուտավանք, Կապուտասար*: Այս բառը տեղանուն ավելի հաճախ դառնում է կա՛մ ուղիղ ձևով, կա՛մ բառակապակցության կազմում որպես որոշիչ՝ *Կապույտ խաչ, Կապույտ բացատ, Կապույտ հազ* և այլն:

Հաճախականությամբ հաջորդը *շեկ* գունանունն է, որն արևոտ և տաք կլիմա ունեցող երկրի համար սովորական է, քանզի հայաստանյան բարկ արևն այրում է ամեն ինչ՝ ներկելով շեկ գույնով՝ 24 տեղանուն: Բնորոշ է, որ կավահողի պատճառով շեկ անվանումը ստանում են նաև ջրային օբյեկտները: Վկայված են *Շեկ* անվամբ բազմաթիվ աղբյուրներ, լեռնանուններ՝ *Շեկ քար, Շեկ սար, Շեկ ժայռ, Շիկասար, Շիկավեր* և հանդանուններ:

Շեկին հաջորդում է *գորշ* գույնը՝ 21 տեղանուն: Գորշ-ը տեղանուններ հատկապես ստեղծում է եզակի և հոգնակի թվերով դրված *հող* հիմնաբառի հետ՝ *Գորշահող, Գորշ հողեր*, այս տիպի կառույցները բավականին տարածված են: Բերենք այլ օրինակներ ևս՝ *Գորշ լիճ, Գորշ դարեր, Գորշի*

ետև, *Գորշաքար, Գորշաղբունք, Գորշամարգ, Գորշատեղ, Գորշաթումբ*:

*Ոսկին*՝ իբրև գունանուն, տեղանվանակերտ հիմնաբառ է դարձել հետևյալ կազմություններում՝ *Ոսկեհող, Ոսկեպար, Ոսկեքար, Ոսկեհանդ, Ոսկեճյուղ, Ոսկեմարգ* և այլն, բոլորը բարդությունների բաղադրիչ են՝ 11 անվանում: *Կանաչ* գունանունը ընդամենը 6 տեղանուն է կազմել՝ ջրանուններ, լեռնանուն և հանդանուններ՝ *Կանաչ լիճ, Կանաչ աղբյուր, Կանաչ սար, Կանաչ բլուր, Կանաչուտ, Կանաչուտներ*: Շարքը եզրափակում են *դեղինը* և *ծիրանին*՝ երկուսն էլ տեղանվամբ: Քննված տարածքում առկա է նաև մեկ տեղանուն լաջվարդ հիմնաբառով՝ *Լաջվարդ* (Արմավիր):

Այսպիսով, գունանունները տեղանուն են դառնում 5 եղանակով՝ ա) ուղիղ ձևով՝ առանց հավելյալ ձևային՝ *Կարմիր, Կապույտ, Կանաչ, Սպիտակ* և այլն, բ) բառաթեքմամբ, երբ տեղանուն են դառնում գունանվան հոգնակի ուղղական հոլովածևեր կամ եզակի թվի հոլովածևերը՝ հիմնականում սեռական-տրական՝ *Կանաչուտներ, Սևեր, Կապուտին, Շեկին, գ*) տեղանվանակերտ ածանցներով, որոնք փոքրաթիվ են՝ *-ք, -ավոր, -ուտ, -ուկ -ակ, -ան*: Յուրաքանչյուրից բերենք օրինակներ՝ *Կարմիրք, Կապույտք, Սպիտակավոր, Կարմրավոր, Սևավոր, Սևուտ, Կարմրուտ, Կանաչուտ, Սևուկ բերդակ, Կապուտակ, Կարմրակ, Կապուտան, դ*) բառաբարդմամբ, հայերենում գունանունները, որպես կանոն, տեղանվանահիմք դառնում են հիմնականում հենց այս կերպ՝ կազմելով հոդակապով, անհոդակապ, կցական, հարադիր, ավելի սակավ՝ կրկնավոր բարդություններ, ինչպես՝ *Շիկահանդ, Սպիտակասար, Գորշատեղ, Կապտավանք, Սպիտակջուր, Սպիտակ սար* (կցական կամ հարադիր լինելու տեսանկյունից, ինչպես վերը նշեցինք, հստակություն չկա, մի դեպքում *Սևջուրը* կցական է, մեկ այլ դեպքում՝ հարադիր՝ *Սև ջուր*), *Շեկ-շեկ, Սև-սև...*, ե) բառակապակցությունների կազմում: Գունանունները սովորաբար տեղանուն կամ մանրատեղանուն դառնում են որպես ստորադասական բառակապակցության բաղադրիչ, գունանունը ծառայում է իբրև որոշիչ տարբեր բնույթի որոշյալների համար, երբեմն գունանունն էլ իր հերթին կարող է ունենալ որոշիչներ, ավելի հազվադեպ գունանունը գործածվում է գոյականաբար՝ ստանալով իր լրացումը՝ *Գորշի ետև, Սևի տակ*: Մեր քննարկած տարածքներում հանդիպում են անգամ քառաբաղադրիչ բառակապակցություն տեղանուններ, որոնք մեծամասամբ մանրատեղանուններ են: Բնականունները, ջրանունները կամ լեռնանունները հիմնականում երկբաղադրիչ են կամ եռաբաղադրիչ: Բերենք օրինակներ՝ *Կարմիր կող, Գորշի ետև, Հին Կարմրավան, Նոր Կարմրավան, Ներքին Կարմիր աղբյուր, Վերին Կարմիր աղբյուր, Փոքր Կապույտ սար, Վերին Կարմիր սար, Սև քարի ճանապարհի գլուխ, Սև լճի աղբյուր, Սև սյունի կողքի արտեր* և այլն:

Ամփոփելով գունանունների կիրառման հաճախականության հարցի ըննությունը՝ առանձնացնենք գերակշռող երեք գույները՝ *կարմիր / ալ, սև, սպիտակ / ճերմակ*: Դատելով Հայաստանի տեղանուններում այս գունանունների գուտ թվային հարաբերակցությունից՝ մեր ազգը պահպանում է աշխարհի ընկալման լավատեսական լիցքը՝ չնայած սև իրողությունների սովոր զանգվածին: Շրջապատող աշխարհի հայկական ընկալման և անվանադրման մեջ գերակշռում է կարմիրը՝ և՛ ուղղակի, և՛ փոխաբերական իմաստներով, դրան լրացնելու է գալիս սպիտակը:

**Н. А. ДИЛБАРЯН – *Цветобозначения в топонимах Армении.*—**

Топоформантами в армянском языке становятся следующие цвета: красный-алый, черный, белый, синий, серый, золотистый, рыжий, зеленый, желтый. Эти топоформанты образуют как ойконимы, гидронимы, названия возвышенностей, ущелий, религиозных объектов, так и микропонимы - названия полей, лугов, лесов, малых геоморфологических объектов и т.д. В статье исследуются в синхроническом срезе словообразовательные особенности образованных из цветобозначений топонимов и микропонимов 8 областей Армении (500 топонимов). Наибольшей продуктивностью отличаются следующие цветобозначения: красный/алый - 177/4, черный - 129, белый - 61, синий - 46 и серый -21. Это является своеобразным языковым выражением ментальности народа, создавшего географические названия окружающего мира. В армянских топонимах в противопоставлении красное-черное доминирует красный цвет и в прямом, и в переносном значении.